

կան առաքինութեանց այս ճշմարիտ խանութին մէջ զարգանան առաքինութեամբ և օգտակար ըլլան հայրենեաց. չըլլան ցօփ և անառակ երիտասարդք, որով ֆիզիքական խոտորումը հասցնէ ազաբարոյական խոտորման, և անարգ ախտիւք և մոլութեամբք վերջապէս կործանեն թէ գիրիւք և թէ զընտանիս :

Նա է տէր անձին՝ որ գիտէ պէտքերն հնազանդեցնել մտաց, և միտքն Աստուծոյ . բայց ցաւալին այն է որ մարդկային վիճակին մէջ եթէ մեր միտքն վախճանը կը ցուցնէ մեզ, կիրքերն շատ անգամ կը հեռացնեն զմեզ անտի :

Միակ և պարզ գիծ մ'է սահմանն որ կը բաժնէ զբարին 'ի չարէ . և այս գիծն է պարտքը : Վայ այն անձին որ այս գծէն դուրս կ'ելէ . և անդունդն՝ առ որ կը յառաջէ այն թշուառականը՝ այնչափ աւելի վտանգաւոր է, որչափ զառ 'ի վայրն 'ի սկզբան հաճոյական և գրեթէ անզգալի :

Գ Ա Գ Ա Ղ Շ Ի Ն Ո Ղ Ը

(Տես հատ. ԽԸ. յէջ 448)

Հիւրք իրարմէ բաժնուեցան ուշ ատեն ու մեծաւ մասամբ զինով, Գէր հացագործը և կազմարարը՝ որուն գէմբը, կարծես, կարմիր կազմի կաշոյ գոյն առած էր, Եւուքոյին թե առած, առին տարին մինչև իւր խաղը, նկատելով յայսմ գիպի Ռոսի առածը թէ՛ «Պարտքը վճարմամբ կը գեղեցկանայ» : Դազաղ շինողը տուն դարձաւ հարբած ու զայրացած . — Իրացնէ, ինչ է սա, կը մըմուսայր ինք իրեն, ինչով իմ արուեստս ստորին է ուրիշներէն. միթէ գագաղ շինողը գահճի եղբայր է . ինչ բանի կը ծիծաղին այդ անհաւատները . միթէ գագաղ շինողը ինքզինակ է : Մտքէս կ'անցնէր նոցա հրաւիրել ինձ 'ի նոր բնակութիւն փառաւոր խնջոյքով մի հարկելու . բայց ոչ, ինչեւ չէ այդ : Պիտի հրաւիրեմ, յերաւի, զնոսա որոց համար կ'աշխատիմ — ուղղափառ մեռեալներու —

— Է՛հ, ինչ է ասածդ . սոսց աղախինը նորա ոտքի կոշիկը քաշելով . ինչ է այդ աւելորդ խօսքերդ . երեսդ խայ հանէ . ինչ ասել է հրաւիրել մեռեալք 'ի նոր բնակութիւն . ինչ սարսափելի բան :

— « Աստուած վկայ, պիտի հրաւիրեմ, շարունակեց Ազրիանոս, անմիջապէս վաղուան օրը պիտի հրաւիրեմ : Խնդրեմ, խնդրեմ, իմ բարեբարքս, վաղը երեկոյ ի սեզան ճաշկերոյթի, պիտի հարկեմ ձեզ ինչ որ Աստուած պարգևել է : — Այսպէս ասելով, գագաղ շինողը մտեցաւ անկողնին ու շուտով խորգալով խոր քունի գնաց :

Գիշերը դեռ մութ էր երբ Ազրիանոսին զարթեցուցին . Տիկինն Տրիւխին վախճանել էր նոյն իսկ այն գիշերը . ու մասնաւոր կերպով

Նորա ծառայողին կողմանէ ձիաւոր եկել էր Ազրիանոսին իմացնելու : Դագաղ շինողը ձիաւորին տասը կոպէկ տուաւ բարիձեռք. նրա տաւ կառք, գնաց 'ի Ռազզուլեայ : Հանգուցելոյն տան դրան առջև արգէն սօսիկանութիւնն կանգնած էր. իսկ վաճառականք կը շըրջէին մեռելի հոտ առնող ագռաւներու նման : Հանգուցեալը պատկած էր սեղանի վրայ, մոմի պէս գեղին, բայց դեռ ոչ այլանդակեալ փտութեամբ :

Քովը կը խռնէին ազգականք, գրացիք աւ մերձաւորք : բոլոր պատահանները բաց էին. մոմերը կը վառէին. քահանայք աղօթք կը կարգային : Ազրիանոս մօտեցաւ Տրիւխինի եղբորորդւոյն որ էր մի պատանի վաճառական, նորաձև հագուստով, ասելով՝ թէ դագաղը, ճըրագները, ծածկոցը և այլ յուղարկաւորութեան վերաբերեալ հարկաւոր իրք՝ չուտով պիտի հայթհայթէ բարեկարգաբար : Ժառանգը, ցրտած մտքով, շնորհակալ եղաւ ասելով՝ որ գնոյ մասին խօսք չի անել, ամենայն ինչ նորա խղճմտանքին կը ձգէ : Դագաղ շինողը, ըստ իւր սովորութեան, երդում արաւ որ աւելի չ'առնուր. նշանական աչքով նայեցաւ հանգուցելոյն ծառայողին աչքին մէջ. կառք նստաւ, ելաւ գնաց գործերը կատարելու : Բոլոր օրը, մէկ մի 'ի Ռազզուլեայ, մէկ մի 'ի Նիկիտեան դռները վազվաւոց կառքով. երեկոցեան դէմ, ամենայն ինչ կարգի դնելով՝ տուն դարձաւ : կառքը արձակելով, լուսնկայ գիշեր էր : Դագաղ շինողը անվիաս հասաւ մինչև Նիկիտեան դռները : Ի վազեանիէ, նորա ետևէ ձայնեց մեր ծանօթը Խուբքօ, ճանաչելով զդագաղ շինողն, բարեմաղթեց նմա բարի գիշեր :

Ժամանակը ուշ էր. Ազրիանոս կը մերձենար իւր տան երբ յանկարծ տեսաւ որ մարդուն մէկը իւր կառանցիկ դրանց մօտեցաւ, բացաւ դռնիկը ու ետևը պահուրտեցաւ :

— « Ի՞նչ կը նշանակէ սա » մտածեց Ազրիան. նորէն որուն եմ հարկաւոր. գող չէ՞ արդեօք եկողը. աղջկներու սիրահարք չգան յանկարծ, ո՞վ գիտէ : Նա կը մտածէր արդէն յօգնութիւն գոչելու իւր Խուբքօ բարեկամը, երբ նոյն վարկենին, այլ ոմն ևս մօտեցաւ դրան ու կ'ուզէր մտնել, բայց տեսնելով որ տանտէրը վրան կը վազէ՝ կանգնեցաւ ու հաննեց եռանկիւն զլխարկը :

Նորա դէմքը ծանօթ երևեցաւ Ազրիանու, բայց արտօրալով չըկարողացաւ լաւ նայիլ. — « Հրամանախնդ հիւր եկաք առ իս, ասաց Ազրիան հեալով. — մտէք ներս, խնդրեմ. — Ընդ նազել, եղբայր, պատասխանեց եկողն խուլ ձայնով. առջև անցիր, հիւրերուն ճամբայ ցոյց տուր » : Ազրիանոս յիրաւի նազելու ժամանակ չ'ունէր : Դուռը բաց էր, գէչպ 'ի սանդուղիս դիմեց, հիւրն ևս ետևէն : Ազրիանոսի այնպէս թուեց որ սենեակներուն մէջ մարդիկ կը քայլեն : « Սա ինչ

սատանայական բան է » ասաց . ու անապարեց ներս մտնել . բայց ուրբերը սկսան սատարիկ դողդղալ :

Սենեակը լեցուն էր մեռեալներով . լուսինը թափանցելով պատուհանէն կը լուսաւորէր նոցա դեղնած ու կապոյտ գէմքը , խորտակեալ բերանքը , պղտոր , կիսափակ աչքերը ու դուրս ցցուած քիթերը Ադրիանոս սարսափով ճանչցաւ իրեն հետ ներս մտնող հիւրը՝ որ էր տասնապետն ձիաւորաց , որոյ թաղումը տեղի ունեցել էր յորդ անձրեի ժամանակ . Նոքա ամէնքը՝ կ'անայք և արք , շրջապատեցին զնա բարեկեցիկ ու բարեմաղթութեամբք . աղքատ մի միայն՝ որոյ ձրի թաղուածը շատ ժամանակ չէր , կ'ամաչէր ու կը քաշուէր հագած հին լաթերէն , խոնարհարար անկիւն մի կանգնած , չէր մտեռ , նար : Բոլոր այլ մեռեալք հագուած էին վայելուչ ձևով . հանգուցեալ կանայք ժապաւինեալ գլխարկներով , աստիճանաւոր մեռեալք պաշտօնազգեստով , բայց մօրուանի , վաճառականք տօնական բաճկոն հագած . « կը տեսնես , Պրոխորով , ասաց ձիաւորաց տասնապետը բոլոր պատուաւոր ընկերութեան կողմանէ . « մէք բոլորս եկանք քոյ հրաւէրքիդ , տունը մնացին միայն անկարողք որ այլ բոլորովին քայքայուած են , անկաշի ոսկրոտիք միայն . բայց նոցամէ մին չհամբերեց , շատ կը ցանկար տունը դալու Նոյն վայրկենին , փոքր կմախք մի ճեղքելով բազմութիւնը , Ադրիանոսի մօտեցաւ . Նոքա գանկը քաղցր կը ժպտէր առ դագաղ շինողն : Բաց կանաչ ու կարմիր չուխայի և հնացած կտաւի կտորուանք կախուած էին նորա վրայ , կարծես ցցէ կախուած : Իսկ ուրքի ոսկրոտիք , երկայնախոնճ կօշիկներու մէջ , կը շարժէին որպէս սանդի կոթը՝ սանդին մէջ . « Դու գիտ չճանչցար » ասաց կմախքը . — կը յիշես պաշտօնը թողած յիսնապետը Պետր Պետրովիչի գնդին՝ որոյ 1799ին դու քու առաջին դագաղդ ծախեցիր , որ փոխանակ կաղնիէ լինելու շոճիէ շինուած էր » : Այս ասելով , մեռեալը տարածեց առ նա իւր ոսկրէ բազուկքը . բայց Ադրիանոս ոյժ սիրտ մէկ անելով , կանչեց ուժգին , ու հրեց զինքը : Պետր Պետրովիչ երերաց , վար ընկաւ ու ցիր ու ցան եղաւ : Մեռելոց մէջ բարկութեան արտունջ բարձրացաւ , ամէնքը իրենց ընկերով կողմը բռնեցին , սկսան նախատել և սպառնալ Ադրիանոսի որ խլացած նոցա աղաղակէն ու գրիթէ ճնշուած , կորանցնելով մըտաց արթնութիւնը , սիրտը անցաւ , ընկաւ ինքնին՝ պաշտօնը թողած գնդի յիսնապետին ոսկրոտեաց վրայ :

Արեգակը շատուց 'ի վեր կը լուսաւորէր անկողինը՝ յորում դագաղ շինողը կը քնանար , որ վերջապէս արթննալով տեսաւ իւր առջևը զաղախինը որ հեշտաեռին մէջ կը փչէր :

Սարսափով յիչեց նախընթաց օրուան գործողութիւնք , Տրիւխինի , ձիաւորաց տասնապետը ու Կուռիլկին յիսնապետը պղտոր կը

ներկայանային իւր երեակայութեան. լուռ կեցած կը սպասէր որ ազախինը սկսէր խօսիլ ու յայտնել գիշերային գիպուածոց հետեանքի մասին. — Ի՞նչպէս քուն եղար մնացիր, Ադրիան Պրոխորովիչ, ասաց Աքսինեա, վերնազգեստը տալով. — գրացի գերձակը եկաւ քեզի, նոյնպէս այս տեղի պահապանն վազեց հոս խմացը նեւու թէ այսօր թաղապետին տօնն է. իսկ դու քուն կը քաշէիր, չուզեցինք քեզ զարթեցնել:

— Հանգուցեալ Տրիւխինի տունէն մարդ չեկաւ ինձ:

— Հանգուցեալ. միթէ նա վախճանել է.

— Այ անմիտ. դու չէիր որ ինձ օգնեցիր նորա թողման իրբը շարելու.

— Ինքեղ ես, ինչ է. թէ չէ երեկուան գինովութիւնդ անցած չէ գեռ. ինչպիսի թաղում է այդ. դու բոլոր օրը կերար խմեցիր գերմանացիին տունը, տուն դարձար հարբած, պառկեցար անկողին ու մինչ սա ժամիս քուն եղար մնացիր, արդէն պատարագի զանգակը զարկաւ:

— Այնպէս ուրեմն, ասաց Անդրիանոս ուրախացած,

— ճշմարիտ. պատասխանեց ազախինը.

— Ուրեմն եթէ այնպէս է, շուտ թէյը բեր ու աղջկանցս ճայնտուր:

ՊՈՒՇԿԻՆ

Թարգմ. Մ. Ռ. ԹԻՄԿՆՅԱՆ

